



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

**«ԲՈՒՆ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ԵՐԿՆՔՈՒՄ
ՕԴԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ**

1965 թ. մարտի 2-ին ամերիկյան ռազմաօդային ուժերն սկսեցին Հյուսիսային Վիետնամի ռմբակոծումը («Rolling Thunder» ռազմագործողություն)՝ Հարավային Վիետնամի տարածքում սկսելով ինտերվենցիա: Սկզբնավորվեց արյունալի մի հակամարտության, որը տարիներ անց իր խորը հետքն է թողնելու ռազմարվեստի պատմության էջերում¹ [1]:

Պատերազմն աչքի ընկավ մի շարք նորամուծություններով, որոնց վիճակված էր էական դեր խաղալ հետագայի ռազմագործողություններում: Այդ նորարարությունների ճշգրիտ ըմբռնման համար անհրաժեշտ է առանձնացնել վիետնամական պատերազմի պատերազմաբաղադրիչները:

Հասարակական միջավայրում վիետնամական պատերազմն ասոցացվում է ջունգլիներում իրականացվող ցամաքային պատերազմի հետ, ինչը լուրջ մեկ պատերազմաբաղադրիչ է և իր կարևորությամբ զիջում է տեղեկատվական և օդային պատերազմներին: Օդային պատերազմի նշանավոր էջերից է «Բոլո»² ռազմագործողությունը, որին նվիրված է սույն աշխատանքը:

Վիետնամական պատերազմը, ուղղաթիռային ավիացիայի նորամուծությունից բացի, աչքի ընկավ նաև նոր տիպի ռեակտիվ ինքնաթիռների կիրառմամբ, որոնք ունակ էին ռազմական բավականին լուրջ առաջադրանքներ կատարել՝ ընդհանուր առմամբ պատերազմի ընթացքում իրականացնելով շուրջ 40 միլիոն թռիչք:

Ռմբահարումների առյուծի բաժինը «B-52 Stratofortress» ռմբակոծիչներին էր³ [2]: Այս ռմբակոծիչները բավականին խոցելի էին խորհրդային նորահայտ «МиГ-21» կործանիչների դեմ պայքարում. այդ է պատճառը, որ լուրջ կորուստներ կրում էին [3]: Անհանգստացած այս փաստով՝ կործանիչային 8-րդ ավիաթևի հրամանատար գնդապետ Ռոբին Օլդսը 1967 թ. հունվարի 2-ին կազմակերպեց «Բոլո» ռազմագործողությունը, որը պետք է պատժիչ բնույթ ունենար:

¹ Վիետնամական պատերազմի մասին ստեղծվել է բազմահազար գրականություն: 1992 թ. տվյալներով՝ արդեն առկա էր շուրջ 3500 միավոր ուսումնասիրություն ինչպես այդ պատերազմի դեպքերի, այնպես էլ Հնդկաչինյան պատերազմների ժամանակ ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ:

² Ռազմագործողությունն իր անունը ստացել է ֆիլիպինյան շեղբի (մաչետ) տեղային տեսակի անունից:

³ B-52 (Boeing B-52 Stratofortress) ինքնաթիռները միջմայրցամաքային հեռահար ռմբակոծիչներ են, որոնք ԱՄՆ ռազմաօդային ուժերը սկսել են կիրառել 1955 թ.: Սկզբնապես այն նախատեսված էր ԽՍՀՄ ցանկացած տարածք ջերմամիջուկային ռումբեր հասցնելու համար: Այս ինքնաթիռները լայնորեն կիրառվել են վիետնամական պատերազմի ամբողջ ընթացքում՝ ընդհանուր առմամբ իրականացրել են շուրջ 126 հազար թռիչք, կորցրել՝ 30 ինքնաթիռ:

Այս ռազմագործողության նպատակն էր հասնել «Ֆուկ-յեն» օդանավակայան և նմանակելով անօդնական ռմբակոծիչների՝ հանկարծակիի բերել ու թաքստոցներից դուրս հանել վիետնամական կործանիչներին: Ամերիկացի օդաչուները թռչում էին «McDonnell Douglas F-4 Phantom II» կործանիչներով, որոնք արագությամբ զիջում էին խորհրդային կործանիչներին, սակայն ցածր բարձրություններում առավել դյուրին էին մանևրում: Այդ ամենը քաջ գիտակցելով՝ Ռոբին Օլդսը հնարամտորեն ծուղակ պատրաստեց, որի խայծն էլ հենց կուլ տվեցին հյուսիսվիետնամացիները:

Ամերիկյան 12 ռմբակոծիչներ⁴ այն էլ անփորձ անձնակազմերով⁵, վաղ առավոտյան մարտի բռնվեցին խորհրդային 14 կործանիչների հետ: Մարտի արդյունքներն ուղղակի ապշեցուցիչ էին: Թեև վիետնամացիները փորձեցին արագորեն փախչել Չինաստան, սակայն դա ոչ բոլորին հաջողվեց: Նրանք տվեցին յոթ կորուստ: Հակառակ դրան՝ ամերիկացիներն ընդհանրապես կորուստ չկրեցին: Վիետնամական տվյալներով՝ այդ օրը խոցվել է միայն «МиГ-21 ПФЛ» հինգ կործանիչ, որոնց կողային համարները և անձնակազմերի անունները հայտնի են [4]:

Օդային այս մարտերը բացառիկ էին: Նախ, առաջին անգամ վիետնամական կողմը չունեի թվային գերակշռություն: Միաժամանակ ամերիկյան ուժերը հանդես եկան հարձակվողի դերում՝ կիրառելով մարտավարական մի շարք նորամուծություններ: Չնախատեսված պայմաններում արագ որոշման կայացումը նույնպես խոսում է Ռոբին Օլդսի որակական բարձր հատկանիշների մասին: Նախկինում ամերիկյան օդաչուները հեռահար մարտը գերադասում էին մոտակա մարտից: Այժմ պատկերը փոխվում է:

Վիետնամական պատերազմի հարուստ գրականության հետ մեկտեղ բազմաթիվ միջեր են հյուսվել Հնդկաստանյան պատերազմների վերաբերյալ [5]: Թեև դրանց մի մասն արդեն հերքվել է, սակայն պետք է փաստել, որ մինչ օրս վիետնամական պատերազմն ընկալվում է իբրև ջունգլիների պատերազմ:

Օդային պատերազմաբաղադրիչի մանրակրկիտ ուսումնասիրությունն ի հայտ է բերում հետաքրքիր դրվագներ: Նախ, առաջին անգամ մենք գործ ունենք ուղղաթիռային պատերազմի հետ: Ուղղաթիռներին է բաժին ընկնում թռչող սարքերի կատարած թռիչքների մեծ մասը: Բացի այդ, արագաշարժ ինքնաթիռները լայնորեն կիրառվում էին ամերիկացի զինվորին օգնության հասնելիս [6]:

Դրա հետ մեկտեղ սկսել էին կիրառվել ռեակտիվ նոր ինքնաթիռներ, որոնք ունակ էին միջին հեռավորության օդային-հրթիռային մարտ վարել: Կործանիչների կողքին մեծացավ նաև ռմբակոծիչների դերակատարությունը: Խորհրդա-վիետնա-

⁴ Նախատեսվում էր ավելի մեծ քանակի կործանիչների կիրառում, սակայն եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով հնարավոր եղավ օգտագործել միայն 12 միավոր կործանիչ:

⁵ Անփորձ լինելուց բացի՝ ամերիկյան օդաչուների շրջանում նկատվում էր յուրատեսակ վախ խորհրդային կործանիչներից: Բազմաթիվ օդաչուներ իրենց դիմումների համաձայն տեղափոխվում էին քաղաքացիական ավիացիայի ստորաբաժանումներ: Այդ բարոյալքված իրավիճակը կարողացավ շտկել գնդապետ Ռոբին Օլդսը՝ սահմանելով հատուկ ռեժիմ և ամբողջովին փոխելով օդուժի մարտավարությունը:

մական կողմը ռմբակոծիչները փորձեց հակադրել զենիթահրթիռային համալիրներով, որոնց պայքարը, սակայն, արդյունավետ չէր: Հատկանշական է նաև այն, որ նույն ժամանակահատվածում նմանատիպ հակամարտություն էր ընթանում նաև Մերձավոր Արևելքում, որտեղ վեցօրյա պատերազմի ընթացքում իսրայելական օդուժը քարը քարի վրա չթողեց եգիպտական հակաօդային պաշտպանության համակարգը [7]:

Խորհրդային քարոզչամեքենան, իհարկե, ամեն ինչ պետք է աներ սեփական պարտությունը քողարկելու և պատկերը հակառակ կողմից ներկայացնելու համար: Այդ նպատակով կիրառվել են բազմաթիվ կեղծիքներ, որոնց մի մասն այսօր արդեն բացահայտվել է, իսկ ռազմական կորուստների որոշ թվեր՝ ճշտվել: Մասնավորապես, օդային մարտերի կորուստների հաշվարկումը տալիս է հետևյալ պատկերը՝ 2.2:1՝ հօգուտ ամերիկյան կործանիչների:

Սրանով կարելի է բացատրել նաև այն փաստը, որ հյուսիսային կողմը բաց մարտերի փոխարեն ընտրել էր դարաններից կամ թաքստոցներից հարվածելու մարտավարությունը: Բացի ինքնաթիռների տեխնիկական հագեցվածությունից՝ ամերիկացիները հաղթում էին նաև հրթիռների որակով, ինչը լավագույնս դրսևորվեց «Բոլո» ռազմագործողության ժամանակ:

Գրեթե նույն պատկեն էր նաև ցամաքում և ծովում: Հրեա նշանավոր ռազմական գործիչ Մոշե Դայանը վիետնամական պատերազմի տարիներին հայտնվել էր ամենամեծ ավիակրի⁶ [8] (USS Constellation⁷ [9]) տախտակամածին, որից հետո ճամփորդելու նպատակով ուղևորվել էր վիետնամական ափերով: Նա զինվորական հմուտ գործիչ էր և հաճախ ընթերցել և լսել նման նավերի մասին: Սակայն այն, ինչի ականատեսը դարձավ, «զարմանահրաշ տպավորություն» էր թողնում: Նավն ամերիկյան ինքնիշխան տարածության հինգ ակր տարածք էր զբաղեցնում: Այն կարող էր ուղևորվել ամենուր՝ առանց անհանգիստ դաշնակիցների համար մտահոգվելու: Մեկուսանալով ծովում՝ անձնակազմը չէր գիտակցում անվտանգության խնդիրը և որևէ այլ բանի բացակայությունը նրանց աշխատանքն ավելի էր բարդացնում: Նավը պաշտպանված էր «*օդից, ջրից, ցամաքից, տիեզերքից և սպորջրյա հարձակումներից*»: Այս մասին տեղեկանում ենք Մարտին վան Քրևելդի «Ինչու Իրաքը կավարտվի Վիետնամի պես» վերլուծությունից [10]:

Բոլոր խոշոր ռազմագործողություններում ամերիկացիները հաղթել են: Այս ամենը, սակայն, ամերիկացիներին թույլ չտվեց հասնել ամբողջական հաղթանակի,

⁶ Ընդհանուր առմամբ Վիետնամական պատերազմում ԱՄՆ ստորաբաժանումները հիմնականում օգտագործել են չորս ավիակիրներ, որոնց արդյունավետությունը բավականին բարձր է եղել: Ռազմածովային ուժերը ունակ էին լուծելու մարտավարական տարատեսակ խնդիրներ՝ միաժամանակ պատրաստ լինելով աջակցելու ցամաքային հարձակմանը:

⁷ USS Constellation-ը (CV-64) շահագործման էր հանձնվել 1961 թ. հոկտեմբերի 27-ին: Ծառայության հիմնական գոտին Խաղաղ օվկիանոսն էր: Ակտիվ մասնակցություն է ունեցել Վիետնամական պատերազմին: Այն հաջողությամբ ծառայել է մինչև 2003 թ, երբ փոխարինելու եկավ USS Ronald Reagan-ը (CVN-76):

քանի որ պատերազմն ի սկզբանե սխալ մեթոդներով էր վարվում: Իր խոսույն դերը խաղաց նաև «վիետնամական սինդրոմը»:

Տեղի տալով ներքին հուզումներին և գիտակցելով պատերազմական ճգնաժամի խորացումը՝ ամերիկյան կառավարությունը 1973 թ. հունվարի 27-ին ստորագրեց Փարիզի խաղաղության համաձայնագիրը և գարնանը վերջնականապես դուրս բերեց իր զորքը Հնդկաստան թերակղզուց:

Դրանով պատերազմական գործողությունները չավարտվեցին: 1975 թ. ապրիլի 30-ին հյուսիսվիետնամցիները գրավեցին Սայգոնը և տոնեցին իրենց հաղթանակը: Դրանով շուրջ երեք տասնամյակ տևած Հնդկաստանյան պատերազմներն ավարտվեցին:

Այսպիսով, Սառը պատերազմի տարիներին Հնդկաստան թերակղզին վերածվել էր ռազմական նորամուծությունների փորձարկման թատերաբեմի: Ռազմարվեստի պատմության և տեսության հետազոտության համար Հնդկաստանյան պատերազմները մեծ կարևորություն ունեն. հենց այդ պատերազմների ժամանակ աստիճանաբար կարևորվեցին օդային գերակայության և տեղեկատվական պատերազմների հիմնախնդիրները:

Վիետնամական պատերազմում ամերիկացիները, ունենալով նկատելի առավելություն, այնուամենայնիվ, չկարողացան վերջնական հաղթանակի հասնել: Ի պատիվ ամերիկացիների պետք է նշել, որ նրանք դասեր քաղեցին և կարողացան ուղղել սխաները՝ 20-րդ դարի ավարտին փայլուն հաղթանակի հասնելով մերձավորարևելյան «Փոթորիկ անապատում» ռազմագործողության ժամանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] America and the Indochina Wars, 1945-1990, Bibliographical Guide, by **Lester H. Brune, Richard Dean Burns**, New war/peace bibliography series, Regina Books, 1992.
- [2] **Lori S. Tagg**, Development of the B-52, The Wright Field Story, History Office, Aeronautical Systems Center, Air Force Materiel Command, 2004.
- [3] **Toperczer I.**, MiG-21 Units of the Vietnam War (Osprey Combat Aircraft, 29). Oxford, UK: Osprey Publishing Limited 2001. **Якубович Н.**, Истребитель МиГ-21, Последние модификации, Москва, 2008.
- [4] **Հովհաննիսյան Ա.**, Ռազմարվեստ, հատոր 1, Օդային գերակայություն, Երևան, 2016, էջ 77-80:
- [5] **Հովհաննիսյան Ա.**, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. Հեռանկարները, Երևան, 2017, էջ 195-208:
- [6] Вьетнам. Боевое применение вертолетов в 2 частях, отв. ред. **Сергеев П. Н.**, «Торнадо», Кировское общество любителей военной техники и моделизма, 1997-2000.

[7] **Tal I.**, National Security, Israeli experience, Praeger; Complete and ed. Edition, 2000, pp. 135-45.

[8] **Доценко В.**, Флоты в локальных конфликтах второй половины XX века, Москва, 2001, с. 123.

[9] America's Flagship: A History of USS Constellation (CV/CVA-64) by **Mike Weeks**, Naval Aviation News, March-April 2004,

URL:<https://www.history.navy.mil/content/dam/nhhc/research/histories/naval-aviation/Naval%20Aviation%20News/2000/2004/march-april/connie.pdf> (07.12.2019).

[10] **Martin Van Creveld**, 'Why Iraq Will End as Vietnam Did', 18 November, 2004, URL: <https://archive.lewrockwell.com/orig5/crevald1.html> (Accessed: 07.12.2019).

Մուրադյան Գուրգեն

«ԲՈՂՈ» ՌԱԶՄԱԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ԵՐԿՆՔՈՒՄ ՕԴԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Բանալի բառեր՝ Վիետնամական պատերազմ, պատերազմավարություն, անհամաչափ պատերազմ, պատերազմաբաղադրիչներ, օդային գերակայություն:

Հոդվածի հեղինակը մանրակրկիտ վերլուծում է 20-րդ դարի ամենանշանավոր պատերազմներից մեկի՝ Վիետնամական պատերազմի առանցքային «Բոլո» ռազմագործողության նախապատրաստումը, ընթացքը և հետևանքները:

Միաժամանակ քննության է առնում Վիետնամական պատերազմի ժամանակ հյուսված միջերի իսկությունը ու հերքում խորհրդային քարազամեքենայի բազմաթիվ կեղծիքներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քարոզչական պատերազմը խորը հետք է թողել «վիետնամական սինդրոմի» ձևավորման գործում:

Мурадян Гурген

ОПЕРАЦИЯ «БОЛО» И ПРОБЛЕМА ГОСПОДСТВА В ВОЗДУХЕ ВО ВЬЕТНАМЕ

Ключевые слова: война во Вьетнаме, ведение войны, асимметричная война, компоненты войны, воздушное доминирование

Автор статьи тщательно анализирует подготовку, процесс и последствия одной из самых ключевых военных операций во время войны во Вьетнаме.

В то же время проверяется подлинность мифов, рожденных во время войны во Вьетнаме, и отрицаются многие фальсификации советской пропаганды. Пропандистская война оставила поистине глубокий след в формировании вьетнамского синдрома.

Muradyan Gurgen

OPERATION 'BOLO' AND THE PROBLEM OF AIR SUPREMACY IN VIETNAM

Keywords: war in Vietnam, warfare, asymmetric war, components of war, air domination

The author of the article carefully analyzes the preparation, process and consequences of one of the most important military operations during the Vietnam War.

At the same time, the authenticity of the myths occurred during the war in Vietnam is verified, and many of the falsifications of Soviet propaganda are denied. The propaganda war has left a truly deep trace in the formation of the Vietnamese syndrome.